

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2013 թվականի N 1157-Ա

### ՄԻՋՁԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի հարավային երկաթուղու կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախագծի, այդ թվում՝ Հայաստանի հարավային երկաթուղու առաջարկվող ծրագծի նախագծի ուսումնասիրման նպատակով՝

*(նախաբանը փոփ. 10.03.14 N 172-Ա)*

1. Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Միջգերատեսչական աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ուսումնասիրել Հայաստանի հարավային երկաթուղու կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման, այդ թվում՝ Հայաստանի հարավային երկաթուղու առաջարկվող ծրագծի նախագիծը և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

*(2-րդ կետը փոփ. 10.03.14 N 172-Ա)*

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

S. Սարգսյան

2013 թ. դեկտեմբերի 13  
Երևան

Հավելված  
ՀՀ վարչապետի 2013 թ.  
դեկտեմբերի 13-ի N 1157-Ա  
որոշման

## Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ

### ՄԻՋՁԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

- Ա. Առաքելյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ (միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավար)
- Լ. Շահվերդյան - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
- Վ. Լալայան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ
- Ս. Մաթևոսյան - ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչության պետ
- Հ. Գասպարյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսական ծրագրավորման վարչության պետ
- Կ. Բակոյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետ
- Գ. Կիրակոսյան - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության

թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փրկարարական ծառայության գնդապետ

- Ա. Աբրոյան -ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետ
- Ա. Օհանյան -ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության մասնավոր իրավունքի բնագավառի իրավական ակտերի փորձաքննության բաժնի պետ
- Ֆ. Եգորյան -ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության հողերի օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ
- Վ. Այվազյան -ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ
- Ա. Չատյան -ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմական հաղորդակցությունների բաժնի պետ, գնդապետ
- Ա. Հարությունյան -ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության աշխատող
- Ա. Սողոմոնյան -ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և քարտեզագրության վարչության գեոդեզիայի բաժնի պետ
- Կ. Մովսիսյան -ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետ, գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
- Ա. Շահնազարյան -«Երկաթուղու շինարարության տնօրինություն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
- Ս. Կարապետյան -«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության սանիտարահիգիենիկ բաժնի ղեկավար (համաձայնությամբ)

*(հավելվածը փոփ. 10.03.14 N 172-Ա)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Վ. Գաբրիելյան**